

լեզուի մը խորիւր վրայէն ձգել, ոգին ալ կը նորոգուի, կ'երիտասարդանայ: Սմբատ լեզուին հետ նորոգեց արդարութեան սկզբունքները: Իր գլխաւոր աշխատութիւններն արդէն օրէնսգիտութեան շուրջը կը զառնան: Թէեւ սպարապետ՝ շատ հակառակութիւններ կրեց՝ մինչեւ որ յաջողեցաւ օրինաց գրեցըր աշխարհաբար թարգմանել և ժողովրդեան ձեռքը դնել: Անսիզներու յառաջարկներն մէջ նշանակած է իր պրպտելու փափաքը, թարգմանութիւնը ճշդելու փոյլը, և հալածանքները՝ զորս կրած է թարգմանելուն և աշխարհաբար թարգմանելուն համար:

« ... Սկիզբն առնեմք ... քի զի արկանել զսոյսութեանն և զԱնիգն զպարտութեան մարաքաղաքին Անիոքայ ... զորս խնդրեցի ես Սմբատ ... ք մեծազարմ իշխանաց իշխանն և յարեան մեծաւորն մեծայ ի Սիր Սիմուռն յԱնապարց Գունդուտապէն: Եւ ինքն ունէր զոր ի բրինձ Փլեմդին ժամանակն Սիր փեր Տիւանդեպէն և Սիր Թուամա Մարաջախան և այլ ի մաստառն և գիտուն իշխանայքն Անապարց էին զբով հաստառն: Եւ հանգուցեալն ի փրկախոս՝ Սիր Մանսէլ Գունդուտապէն իր հայրն էր առել ի նացմէ՝ և իր որդւոյն Սիր Սիմուռնի պարգեւել, և ինք վասն իմ սիրոյս և հուսախ՝ ինձ պարգեւեաց, և ես աշխատեցայ և փութեցի ի հայ լեզուս: Եւ արդ, վասն զի սովորութեամբ այն Անիպոյնէ կու գնայր ազգս մեր և զարպաստ չայոց, և սղալուին ինչ կու զայր մեզ վասն սովորութեան և վտանգութիւնք ողոց, և պղերգանք ինչ տեան հարցանելոյ անդ զմեծամեծ դատաստանն, և ես ուսգին տեղւմամբ և բազում աշխատութեամբ գտի զայս և հալեցայ ի փութելն, և եթէ փութեցի ես՝ յուզարկեցի դարձեալ ի յԱնապարց դարպասն, որ գիւմընդդիմեցին և հաստառեցին իրենց ձեռագրերոյն և վկայութեամբն ու ստոյգ և ըզորդ բան բանի: Եւ արդ, որ կամի հրաբարութեամբ ուզող զԱնիգն և զիրաւունքս, նայ այս և ըզորդ Անիգն Անապարց »:

Այսպէս սպարապետի աննկուն կամքով, որով այնքան անգամ թշնամի բանակներու դէմ դրած էր, Սմբատ կը յաղթէ հաւկառակորդներուն ալ. աշխարհաբարն այլ եւս ազգին լեզուն կը հռչակէ, ու կը հիմնէ անոր զբաղանդութիւնը: Ինքը առաջինը կ'ըլլայ՝ որ գաղափարը կ'ունենայ զրաբար գրեցըր աշխարհաբար թարգմանելու: Իր լեզուն՝ որ մեր հիմակուան աշխարհաբարին հին ձեւը կրնայ համարուիլ, ինչպէս նաեւ իրեն զարակից և արուեստա-


կից ժուանվիլ ժամանակագրի լեզուն՝ արդի գաղղիերէնի հին ձեւը կը նկատուի, զեռ քիչ մը անհարթ ու անյարգ է. այնուհանդերձ մեր հիմակուան աշխարհաբար ականջներուն ախորժելի ու ընտանի կը հնչէ: Հոս տեղը չէ այս մասին վրայ խօսելու. միայն հաշակ մը տալու համար կ'ընդդիմադրիմ օրէնք մը զրաբար և անոր աշխարհաբար թարգմանութիւնը Սմբատէն:

Եւ եթէ շինեցես տուն նորաշէն, արտացես պսակ շուրջ զտանեօքն, և մի սպանուցն գործեացես ի տան քում, զի մի անկանիքի՝ որ անկանեւոցն իցէ ի նմանէ:

Այս հրամայէ օրէնքս՝ որ մի նոր տուն շինէ, նա բուրքընցն պսակ դնէ, որ մարդ ընդ տան երջն ի վայր շինինի ու մեռնի, թէ չէ՝ արեան տէր է, և զամէն գինքն վհարէ:

Այս անշուք լեզուն, զոր Սմբատ սկսաւ, այսօր ամէն տեսակ մտածութիւն իր պատշաճ ձեւով կրնայ քացաորել: Կ'երեւի թէ երկայն ատեն պիտի տրիէ ազգին վրայ, և պիտի կրթի ու զուարճացնէ զանիկայ: Արեւի հարուստ գրականութիւն մ'ունի, և աւելին կը յուսացնէ իր ապագան՝ որ մեծ կը խոստանայ ըլլալ: Եւ պէտք է յուսալ որ իր փառաւոր պատմութիւնը՝ պիտի չմոռնայ իր դատին նախամարտիկ նշանակելու Սմբատ Գունդուտապէր:

Հ. Ն. ԱՆԻՊԻԿԵԱՆ



ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Փաւստոսի սխալ ըմթնբոլորածների ժողովածոյը կազմակաւ, յիշում էի Սաղմոսի մի խօսքը. « Այս ծով մեծ և անդորը և ի սմա եմ ... սխալմանք բաղումը »:

Գիտնականները խնայել են բազմաթիւ վրեպակները, համարելով մրանց՝ հեղինակի կամ մայակամոթիւններ. այն ինչ մրանք իսկապէս՝ ընդորմակողմերի տգիտութեամբ շմորիւ են դուրս եկել:

Վարդուց պատրաստել էի իմ ուղղագրու-

թիւմներով, երբ աչքիս առաջ ընկաւ Բանա-
սէրի թուերից միւմ (1905, Մայիս, թիւ 5).
« Ձեռագրական սրբագրութիւններ Փաստոսի
մէջ » 4. 8. Ամառեամի, Նրա մկատած 25
վրիպակները, — բաց ի « Մարիմ » ամու-
նից (Բաժնաւոր, էջ 137), — բոլորովին այլ
եմ քամ մեր ցոյց տուած 191 վրիպակները:
4. 8. Ամառեամ « տապրիկ » ամուսն վերայ
ուշ է դարձրել, բայց Ռարկաւոր չի տեսնում
մի ու եւ փոփոխութիւն:

Սոյն ուղղագրութիւններին արել եմ Վեց-
տիկի ՌՄՁԱ — 1832 Ռրատարակութեան վե-
րայ:

1. էջ 7. տող 38. « Բայց ունէին եւ
սակաւ մի խորհուրդ համարձակութեան ի
կնոջէ թագաւորէն զայն գործել, վասն զի
յանդիմանէր զնա սուրբն վասն զաղտնի
շնութեան կծորեան բարոյից պոռնկու-
թեան »: — Ուղղ. գծադրեալ: Այս տեղ բա-
րոյական նուաստութեան եւ ցածութեան
մտքով դրուած մի բառ է, եւ ոչ թէ ժլա-
տութեան կամ ազաւորութեան իմաստով:
Հեղինակին անձանօթ չէ « Գծաւորին »
բառը. Փաստոս՝ խօսելով Հայաստանի
վերայ՝ Արշակայ երեսնամեայ պատերազ-
մից յետոյ երբ « ձանձրացան, պարտեցան,
լքան աշխատեցան երկօրին կողմանքն...
Եւ գծնեցաւ թագաւորութիւնն մեծապէս »:
էջ 160, տող 10:

2. էջ 8. տող 9. « Այսպէս պաշարեալը
ընկապեալը, գելեալը, վաճառք կծկեալը »:
— Ուղղ. վատեալք? « գելեալը » ի եւ « կրծ-
կեալը » ի մէջ ինկած բառը ունենալու է
անկարողութեան եւ տկարութեան իմաստ:

3. էջ 9. տող 32. « Կորուսանել զագգե
երկոսեան »: — Ուղղ. զագգսն. տես ստորեւ
տող 34:

4. էջ 11. տող 2. « Եւ ետ արքայոր-
դին Տիրան զգուստր իւր կնոքիսն Յուս-
կանն »: — Ուղղ. կամ կնոքեան, կամ ի
կնոքիսն:

5. էջ 11. տող 11. « Զի որք առ յա-
պայն եւ առնեց ինն ի նմանէ հովիւքն

զիսաւորք »: — Ուղղ. զի որք առ յապայն
յառնեց ինն ... եւ աւելորդ է եւ ընդօրինա-
կողին յ թուացեր է, առանց իմաստին
միտ դարձնելու:

6. էջ 11. տող 19. « Եւ յետ միոյ գի-
շերոյ ի կին մերձենալոյ, այլ ոչ եւս մեր-
ձեցաւ ի նա, վասն առաքինութեան մանկա-
րեան »: — Ուղղ. մաքրութեան: Այս ուղղա-
գրութիւնը արդարանում է՝ Փաստոսի այլ
խօսքերից. « Ոչ եթէ զամուսնութիւնն ինչ
աղտեղի համարէր », այլ « երկնակեաց
կենացն ցանկացեալ հայէր » եւ « զեղբոր
իւրոյ Գրիգորի զօրինակն բերէր անձին
իւրոյ », որ մաքուր էր եւ կուսակրօն: —
Հմտ. էջ 11-12:

7. էջ 11. տող 29. « Երկնակեաց կե-
նացն ցանկացեալ հայէր. Լաւ համարեք
զծառայելն միայն Քրիստոսի, անձին փառս
համարեք »: — Դիտելի է իմաստի խառնա-
կութիւնը. պակաս է թուում մի բան, որ
երկու « համարէր » ի պատճառաւ վրիպել
է ընդօրինակողի աչքից: Իսկ եթէ ընդու-
նինք այսպէս վերի պարբերութիւնը. « երկ-
նաւոր կենացն ցանկացեալ՝ հայէր » (զմե-
ռանկն) Լաւ համարէր ... ըստ այնմ ցան-
կամ ելանել ի մարմնոյ աստի եւ ընդ Քրիս-
տոսի լինել ... » մի որոշ իմաստ դեռ կա-
րելի է ունենալ:

8. էջ 12. տող 17. « Եւ ի նոցանէ բղղ-
խեցսն շնորհք ... եւ բազում մոլեալք
դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան »:
— Ուղղ. մոլորեալք. « Ժողովուրդն յանգի-
տութեան եւ յանաստուածութեան մոլորեալք
էին ». Իսկ մոլեալքն միայն իբրեւ բարոյա-
կան պակասութեան եւ կամ պատիժի են-
թակայ անհատներ կարող են լինել, որ-
պէս Տրդատ, եւ այլն:

9. էջ 12. տող 36. « Եւ յետ նորա թա-
գաւորեացէ ... եւ ապա եթէ ոք զայցի որ եւ
արասցէ ունել զուխտ հաստատեալ հաւա-
սոց »: — Ուղղ. աւասցէ? Այսինքն՝ այդ
ապականեալ բարուց եւ վարուց մէջ ոչ ոք
չպիտի գտնուի՝ որ կարենայ ասել թէ պա-
հում է ճշմարիտ կրօնքը, եւ հաւատարիմ

մնացել է ինքն ուխտի հաւատոյ դաւանութեան:

10. Էջ 20. տող 23. « Գումարէր զօրան ամենայն տանցն ... և ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց, և ոչ հոյակ »: — Ուղղ. և ոչ տիրի? : Կամ պիտի ընդունինք որ թշնամիք այնքան ահաբեկեր էին որ չէին իշխեր և ոչ Հայաստանի կողմը նայել, և կամ աւելորդ, որ չէ մարթ, գի իմաստն լրացուցիչ իմն պահանջէ:

11. Էջ 24. տող 12. « Եւ առ վայրենի բարուցն ... արհաւիրքս այր »: — Ձեռնու է հարիւր. գի օրինակողն թ գրի երկրորդ մասը համարած է անշուշտ ձ' և իսկոյն տասնապատկեր է:

12. Էջ 24. տող 26. « Եւ բաժանէր լեռան բարձր, ուստի երեսէին զաւառոցն բովանդակ, որում անուն Բնծարկարս կոչէին »: — Ուղղ. ընծարքի—տար: Բարձր լեռ մը շատ բնական է որ կոչուի մի մարդոյ անունով, որ դեր խաղացեր է այդ սարի շուրջը. այդ անձնաւորութիւնը եղել է մի Բնծար անուն մարդ, և կոչուեր է Բնծարքի սար, բայց օրինակողի ձեռք հետեւել է իր վատ հնչման՝ և յիշաբջիւղել է նախնական կոչումը:

13. Էջ 26. տող 37. « Մխիթարեցաւ ըստ ի Գրիստոս ... և սուրբ եկեղեցիքն անօրինակցին »: — Ուղղ. առօրինակցին: Մեծն Վրթանէս ներքողելով պատերազմի մէջ իսկաձնեւորուն, սիրտ կու տայ սգաւորաց անեղով թէ աշխարհի և եկեղեցեաց համար մեռան, որպէս զի մին « մի գերեալ քան զեցի »: Իսկ միւսն « սուրբ եկեղեցիքն (մի) աւերեցին »:

14. Էջ 27. տող 16. « Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին (վաչէ զօրավար և զինուոր) ... ճշմարտութեան Տեառն, մաւտացին ի վերայ եկեղեցեաց ... ի վերայ քանակի տեսնոն աշխարհի »: Առաջինը ուղղելի է մատոցման. իսկ միւսը « ի վերայ քանակի տեսնոն աշխարհի », այսինքն խոսքով:

վայ: — Առաջինը ասել կ'ուզէ Վրթանէս՝ որ մեր քաջ նահատակները ինքզինքնին զոհեցին հայրենեաց և կրօնքի համար, և այլն: Իսկ երկրորդը պարզ է՝ որ Վրթանէս « մխիթարէր զամենեւեան և զինքնին թագաւորն խոսքով », որոյ համար նուիրեցին զիրենք քաջարի զօրականքն: Կարծեմ որ շատ պարզ է մեր ասածն, սակայն իբրեւ ի հաստատութիւն բաւական է աչքէ անցրնել հետեւեալն, էջ 28, տող 26: Խոսքով և հայրապետն փոխին յաշխարհէս, ժողովուրդն կ'առնուն արքունական կառօք զսուրբն Վրթանէս (այստ է և զխոսքով), անհնարին բեկմամբ վասն իւրեանց յայնմ յետի տեսեալն, կամ ի հոգեւոր փառաբանութեան, (ընթերցիր փառաբանութեան) որը մնալուն համար՝ լալով կը տանին մին յԱնի, միւսն ի Թորգան թաղելու: Դրոյնպէս համար. էջ 50, 53, 54, 143, 199, 257. քնակ տիրոջ, այսինքն Արշակունեաց համար:

15. Էջ 29. տող 32. « զԱռամ իշխանն Գողթան » ... զԱռամ ?

16. Էջ 29. տող 36. « Եւ զվերայ տան մի ազգի իշխանն Սաւառունեաց »: — Դիտելի է որ այս ազգաւորումն՝ ունաց ձեռք փաստ եղեր է կարծեւուն՝ որ իբր թէ Բուզանդ Սահառունեաց տոհմիցն է: Մենք ընդօրինակողին անուշադրութեան վերաբերում ենք այդ ազգաւորումը, այսպէս ուղղելով օգնութեամբ էջ 38, տող 20. ուր դարձեալ Սահառունեաց իշխանի վրայ է խօսքը: « Եւ յեցին առ նա Ձոնն իշխանն Սահառունեաց տոհմի »: Ենթադրելով միայն որ կարճ ժամանակամիջոցում, այսինքն Տիրանայ թագաւորութեան սկիզբից մինչեւ Գանիէլի հայրապետական աթոռ բարձրանալը, մեռած չլինի Սահառունեաց իշխանը, որ տանուտէրական պատին ունէր, հետեւում է որ յիշեալ Ձոնն կարող էր նոյն լինել ընդ ազգաւորած « զվերայ » ի հետ: Սուտն անուշադիր օրինակողը իրաւունք ունի շարելով « Եւ զվերայ տոհմի ազգի » կ'անդադարեցնուի որ « իշխանն Սահառունեաց » բաց թողեր է, իսկոյն կը կցէ

նախկին կարաւանին, և հաճա դուրս կու գայ առջեւնիս եղած անիմաստ ընթերցումը : Արդ, կը փորձենք այսպէս ձեւակերպել . « Եւ Զոհն՝ իշխանն ազգին Սահառունաց տոհմի » ... « ազգիս » . գոգցես աւելորդ թուի, կամ պակասի մի այլ իշխանական տոհմի կամ ազգի անուն :

17. Ի՞նչ 29. տող 38. « Զնոսա զամենեսեան հրամայեաց ... հատուցանել զմանուկն Գուրիկ յառաքելական աթոռն հայրապետացն » : — Ուրդ. հատուցանել : Թազաւորն հրամայում է նստուցանել արքունական կառքի մէջ և տանել ի կեսարիա, որպէս զի հատեցեհն հայրապետական աթոռը : Ուստի « իաղասցեն գնացեն » ի պէտք չէ մի դիմաւոր բայ՝ « հասուցանել » , ուր նորա հանդէպը կայ « գնացին եկին հասին ի քաղաքն Կեսարացոց , և ձեռնադրելով զԳուրիկ՝ հատուցին զնա յաթոռն Առաքելոց » : ... Նոյնպէս և յետ դարձին երբ թազաւորին հետ ընդ առաջ են գնում՝ բերում են յԱրտաշատ յեկեղեցին, « և նստուցանէին զցանկալի մանուկն յաթոռ հայրապետական » :

18. Ի՞նչ 30. տող 30. « Սուրբ և պայծառ հոգւով ... իրրեւ զարդոյեան նահապտակ ի տղայութենէ տիոց եկեղեցիք ... » : — Ուրդ. ծածկալէր : « Նշկահել » բառն միայն իշխանութեան տակ լինելու իմաստն ունի, որ մեր սրբոյն չէ յարմարում :

19. Ի՞նչ 31. տող 8. « Վասն որոյ հաւնապազ ընդդիմացեալ ... յերեսան յանդիմանութեամբ հարկանելով խրատելով կըշտամբելով արկանեք , զպատեհումն տանջաւնաց յաւիտեանական բարկութեան » , և այլն : — Ուրդիւի՝ ա. հարկանելով ջնջել , բ. հարկանեք , գ. զպատեհումն : Դիտելի է որ այս հատուածին մէջ մի զուգարկութեամբ իրարու նման վերջանում են պարբերութիւնք . զոր օրինակ « կշտամբելով հարկանէր ... պատմելով բողբոջէր ... յինքեան ցուցանէր ... քաջութեան կատարէր ... ի մահ մարտնչէր ... առնել կամէր ... ոչինչ համարէր ... լի էր ...

չտալ (ուրդ. չտայր) թոյլ ... և այլն : Աստի հետեցեհելով՝ մենք ձեւակերպելով յառաջ բերած պարբերութիւնը ասում ենք « ... հանապազ յերեսան յանդիմանութեամբ խրատելով կշտամբելով հարկանեք , զպատեհումն ... բողբոջէր » : Ուստի բառ իմաստին՝ երես զարեւելուն , հարկանել պիտի և ոչ արկանել , որ չէ բնական խօսակցութիւն :

20. Ի՞նչ 31. տող 28. « Հարցն նմանել ի մանկութեան ... զհանճարոյն զուարթութեան ուշադրեան » : — Արդեօք անուշաբեան ? Առաջին « Հարցն նմանել » էն յառաջ՝ թուի ջնջելու է վերջակետը . երկրորդ՝ զուարթութեան վերջի վանկն՝ ընդօրինակովի աչքին թուացել է նոյն ընդ անուշութեան « ան » ի հետ : Մանաւանդ որ յետոյ բաղդատութիւն մը կը հետեւի ծաղկի հետ , որ անուշութիւն մը ունի թէ տեսքի և թէ հոտոյ , որ է առակ օրինակի սրբութեան վարուց բարուց Գուրկան , որոյ նկարագիրն այնքան քնքշօքն է , Ի՞նչ 30, տող 27, ընդգծել է Բուզանդ :

21. Ի՞նչ 32. տող 31. « Եւ զխաւարային խորխորատ կորստեան զրեալ , հարեայ իւրեանց » : — Արդեօք հաստեալ ? !

22. Ի՞նչ 34. տող 13. « Գնալի ոչ էին թէ որպէս այլոց ազգականաց և հաւատացելոցն » : — Ուրդ. ազգացն . իմաստը պարզ է , համեմատութիւն հայ ազգին ընդ հաւատացելոց և ազգաց :

Շարաշարիկ

Հ. ԳԱՐԻԲԵԼ ԵԱԼԱՊԵՏԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ. Կ. Տ. ՍԱՀԱԿԵԱՆԻ

ՀԱՅ ԿԱՅՍԵՐԻՔ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԻ

Ա. ՀԱՏՈՐ

ՄՈՐԻԿ, ՎԱՐՊԱՆ, ԼԵՌՈՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՎԱՍԻԼ ԱՐԵԱԿՈՆԻ,
ԼԵՌՈՆ ԽՐԱՏԱՐԱՐ, ԱԼԵՔՍԱՆԴՐ

Փյնն թիւ 2, 50